# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ «ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ » ԹԵՄԱՅՈՎ

19.05.2021 14:11

Հարգելի փաստաբաններ,

20.05.2021թ. ժամը 18:30-21:30-ը ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպելու է հեռավար դասընթաց **«ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումները ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի մեկնաբանությունների վերաբերյալ (ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխությունների լույսի ներքո)»** թեմայով:

- Դասընթացը կվարի Երևանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր, ի.գ.թ. Գոռ Թորոսյանը,
- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել` մինչև 20.05.2021թ. ժամը 12:00-ն` պատասխան նամակ ուղարկելով ani.gharibyan@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել տվյալ դասընթացի թեման,  Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը,
- Յուրաքանչյուր դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

**Ուշադրություն. Հեռավար դասընթացը կանցկացվի Google meet հավելվածի միջոցով, որի մասնակցության իրավերը կստանաք ձեր էլեկտրոնային փոստի հասցեին` գրանցվելուց հետո:**

**Միաժամանակ խնդրում ենք հարթակին միանալիս նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը` Ձեր մասնակցությունը հաշվառելու և հարթակում շփվելու համար:**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })